# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«01» նոյեմբերի, 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

**Լիլիթ Հովհաննիսյան՝** ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՇՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

-հայտերը բացվել են www.armeps.am/eaction կայքի՝ էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով,

-հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (29.10.2018թ.) ժամը 12:00-ն,

-էլեկտրոնային հակադարձ աճուրդի մեկնարկ է սահմանվել 31.10.2018թ. 12:00-ն,

-էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 12.10.2018թ. 12:54-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Գնման սույն ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

**3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակիցների անվանումը (անունը) | Հասցեն |
|---|---|
| «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ | astghik59@gmail.com |
| ԱՁ Վարդան Մկրտչյան | 75vardan@rambler.ru |
| ԱՁ Դավիթ Քոչարյան | datl18@rambler.ru |

**4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. ԴԴ-ԷԱՃԱՇՁԲ-18/01 ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

| Չ/Հ | Ընկերություն | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ | - | 4995000 | 20 % | 5994000 | 4995000 | 20 % | 5994000 |
| 1 | ԱՁ Վարդան Մկրտչյան | - | 6215000 | 20 % | 6215000 | 6215000 | 20 % | 6215000 |
| 1 | ԱՁ Դավիթ Քոչարյան | - | 15000000 | 20 % | 15000000 | 15000000 | 20 % | 15000000 |
| 2 | «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ | - | 1245000 | 20 % | 1494000 | 1245000 | 20 % | 1494000 |
| 2 | ԱՁ Վարդան Մկրտչյան | - | 2178000 | 20 % | 2178000 | 2178000 | 20 % | 2178000 |
| 2 | ԱՁ Դավիթ Քոչարյան | - | 15000000 | 20 % | 15000000 | 15000000 | 20 % | 1500000 |

**6. Տվյալներ՝ յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի, Վարդան Մկրտչյան ԱՁ-ի և Դավիթ Քոչարյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը /դիմում-հայտարարությունները/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /դիմում-հայտարարության/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի, Վարդան Մկրտչյան ԱՁ-ի և Դավիթ Քոչարյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերը /դիմում-հայտարարությունները/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

7. **Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.
-Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ -ին,

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 19-րդ կետով՝

1) աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրության, ինչպես նաև նիստին ներկա հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում,

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

4) համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև սույն Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովը որոշեց.

-ղեկավարվելով Կարգի 22-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 8-ին, ժամը 12:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝

Անդամներ՝ Ավետիք Ավագյան

Հովհաննես Ստեփանյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝ Լիլիթ Հովհաննիսյան

Օֆելյա Ասատրյան